

ՄՐՑԱՆԱԿՆԵՐ ՀԱՃԵԼԻ Է ՈՉ ՄԻԱՅՆ ՍՏԱՆԱԼ

ԵՄԱ վարչության նիստում, որ տեղի էր ունեցել 1998-ի հուլիսի 23-ին, որոշում էր ընդունվել լրագրողական ամենամյա մրցանակ սահմանելու մասին: Դեկտեմբերի 15-ին ժյուրին, որի կազմում էին «Հայացք Երեւանից» ամսագրի գլխավոր խմբագիր, ԵՄԱ՝ մասնագիտական էթիկայի հանձնախմբի նախագահ Վալերի Այդինյանը, Հայաստանի ժուռնալիստների միության նախագահ Աստղիկ Գեորգյանը, «Արմենպրես» լրատվական գործակալության գործադիր տնօրեն Մեսրոպ Հարությունյանը, Հայաստանի ազգային հեռուստատեսության գործադիր տնօրեն Տիգրան Նադդայանը եւ ԵՄԱ առընթեր խոսքի ազատության պաշտպանության հանձնախմբի նախագահ Վիգեն Սարգսյանը, որոշեց առաջին մրցանակակիրների անունները:

Մրցանակների եւ մրցանակաբաշխության կազմակերպման համար միջոցները հատկացվել էին ԱՄՆ եւ Եվրամիության՝ «Ժողովրդավարություն եւ քաղաքացիական հասարակություն» մրցանակի շնորհագումարից, որ ԵՄԱ-ն ստացել էր 1998թ. մայիսին:

Դեկտեմբերի 23-ին «Արմենպրեսի» մամուլի սրահում հաճելի սպասման եւ բարեկամական ժպիտների մթնոլորտում թեւածում էր նաեւ հետաքրքրասիրության ոգին. ո՞վ է մրցանակակիր դառնալու: Ամենաանհամբերները հարցուփորձ էին անում գործընկերներին. «Զգիտե՞ս ով է: - Հաստատ չգիտեմ, բայց կռահում եմ: Տեսնո՞ւմ ես Հովհաննես Գալաջյանը փողկապով է եկել, ուրեմն մրցանակակիրներից մեկն ինքն է»: Պետք է արժանին հատուցել ժյուրիի անդամներին, որ ժամանակից շուտ «տեղեկատվական արտահոսք» չէին թույլ տվել: Եվ նշանակված ժամին մթնոլորտը լիցքաթափվեց: ԵՄԱ մրցանակակիրներ դարձան «Հայք» (1998 թվականին լավագույնս կերպափոխվելու համար) եւ «Իրավունք» («Ընկ. Փանջունու անկյուն» խորագրում քաղաքական երգիծանքի ժանրը զարգացնելու համար) շաբաթաթերթերը, Հայաստանի ազգային ռադիոյի գրական-գեղարվեստական հաղորդումների գլխավոր խմբագրության գլխավոր խմբագիր Հովիկ Հովեյանը (թեմային հավատարմության համար), ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի սեփական թղթակից Տիգրան Լիլոյանը (փաստը հարգելու եւ իրազեկության համար) եւ HTB հեռուստաընկերության սեփական թղթակից Դմիտրի Պիսարենկոն (արտերկրում հայաստանյան իրադարձությունները հրատապ լուսաբանելու համար): Սրահում ամենից շատ աշխուժություն առաջ բերեց, թերեւս, Տիգրան Լիլոյանի պատասխան խոսքը. նա մեջբերեց պատվավոր շքանշանների ռեկորդակիր Լեոնիդ Բրեժնեւի խոսքը. պարզեւների համար չենք աշխատում, բայց միշտ հաճելի է, երբ գնահատվում է աշխատանքը:

Լատուրա ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

«Երեւանի մամուլի ակումբ»

Տեղեկագիր

N 8 (23) հունվար-փետրվար 1999